

ՔՈՒՉՍԱ ԵՐԵՒԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի հրապարակած հոսթիալ այցելության մը համար երկր Հայաստանի հասարակական կյանքի մասին հարցազրույցի ժամանակ Լեւոն Քոչարեանը «Չուարթինգ» օրակազմին մէջ ան դիմադրուեցաւ Հայաստանի արդիւնաբերութեան նախարար Կարէն Ժշմարիտեանի կողմէ:

Քոչարեանի Հայաստան այցելութեան ընթացքին տեղի պիտի ունենան հայ-ուրբանական բանակցութիւններ՝ ընդլայնուած կապերով: Պիտի ստորագրուին պաշտպանութեան տեղեկատուութեան ու ժամանակի մարտերուն վերաբերող համաձայնագիրներ: Ուրբանիոյ նախագահը հանդիպումներ պիտի ունենայ Արմենիոյ Ժողովին եւ Երեւանի Պետական համալսարանին մէջ: Ան պիտի այցելէ նաեւ Ս. Էջմիածին եւ Ծիծեռնակաբերդ: Այցելութեան վերջին օրը Լեւոն Քոչարեան հանդիպում պիտի ունենայ Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի հետ:

ԼԻՔԱՆԱՆ ԵՒ ՍՈՒՐԻԱ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՊԻՏԻ ԴԻՄԱԳՐԱՒԵՆ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ԴՆՇՈՒՄՆԵՐԸ

Կ'ԸՍԷ ԶՕՐ. ԼԱՅՈՒՏ

Նախագահ Քոչարեանի Լազուս շնորհիւ երկր Հաւաստեց, որ լիբանանեւստերիական երկկողմանի յարաբերութիւնները հիմնուած պիտի մնան եղբայրութեան եւ գործակցութեան հիմքերով վրայ, որովհետեւ միայն նման յարաբերութեամբ է, որ Իսրայէլի կրնան դիմադրել եւ երկիրներուն միջեւ կայունութիւնը ապահովել՝ առաջը առնելով շրջանին մէջ որեւէ պայթումի:

Նախագահ Լազուս շնորհիւ, որ փորձառութիւնը փաստած է, որ Լիբանան եւ Սուրիա կարող են դիմադրելու որեւէ ճնշումի՝ հիմնուելով Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի օրերէն իսկ որդեգրուած միացեալ ռազմավարութեան: Ճնշեալ ռազմավարութեան շնորհիւ, որ այսօր տակաւին կը շարունակուի նախագահ Պաշար Ասատի կողմէ, շրջանային իրադարձու-



Քոչարեանը կը պարգևատրէ Ղազի Զառուանը

թիւններն ու զարգացումներն ոչ մէկ ազդեցութիւն պիտի ունենան Լիբանանի եւ Սուրիոյ կայունութեան վրայ», ըսաւ նախագահ Լազուս: Նախագահ Լազուս վերոնշեալ յայտարարութիւնները կատարեց Լիբանանի մէջ սուրիական ուժերու պատասխանատու զօր. Ղազի Քառուանը ընդունած ժամանակ:

Նախագահ Լազուս զրուստեց զօր. Քառուանի ճիգերն ու ջանքերը՝ Լիբանանի մէջ սուրիական ուժերու պատասխանատու պաշտօնի ստանձնումէն սկսեալ եւ 20 տարին շարունակ, որոնց ընթացքին ան յաջողեցաւ աշխատիլ բարե-

Շար.՝ Էջ 10

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ՈՒԺԸ ՊԻՏԻ ՕԳՏԱԳՈՐԾԵՍ ԻՐԱՔԸ ԱՊԱԶԻՆԵԼՈՒ ՇԱՄԱՐ


Կ'ԸՍԷ Գ. ՊՈՒՇ

Միացեալ Նահանգներու նախագահ Ջորջ Պուշ կը շարունակէ ամերիկեան նահանգներու իր «շրջապտոյտը», որուն նպատակն է ապահովել ամերիկեան հանրային կարծիքին պարակցութիւնը Իրաքի դէմ որդեգրած իր կեցածքին, ինչպէս նաեւ համոզելու համար Քոնկրէսը, որ պիտուորական գործողութիւն մը լիապօրոյ որոշում մը հրապարակէ:

Թերապի Նոքսիլի քաղաքին մէջ արտասանած իր ճառին մէջ Պուշ յայտարարեց, որ ամերիկեան պիտուորական ամբողջ ուժը պիտի օգտագործէ ապապիւնելու համար Իրաքը: Պուշ յայտարարութեան հակադարձեց Պաղատս՝ Վաշինգթոնի արաբական երկիրները, որ Իրաքի դէմ յարձակում մը պղծեցութիւն պիտի ունենայ նաեւ իրենց վրայ:

Իր խօսքին մէջ Պուշ ըսաւ, որ աշխարհը կը գտնուի հիմնական հարցումի մը դիմաց. Սատտամ Հիւսէյնի դէմ քան մը ընէ՞լ, թէ ձեռնաձայ մնայ: Ան աւելցուց, որ Ուաշինկթըն կը սպասէ տեսնելու համար, թէ ՄԱԿ պարտու կամքը ունի՞ պարտադրելու իր որոշումներուն գործադրութիւնը: Իսկ եթէ միջապային ընտանիքը անկարող ըլլայ գործելու, Միացեալ Նահանգներ պատրաստ են առանձին առաջնորդելու պիտուորական ճակատ մը, որ խաղաղութեան ծառայելու համար պիտի ապապիւնէ Իրաքը:

Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի հակադարձեց՝ շեշտելով, որ Պուշ սպառնալիքներ կ'ուղղէ, որովհետեւ անկարող դարձած է ծունկի բերելու իրաքցիները եւ պարտադրելու, որ անոնք ներողութիւն խնդրեն: Իսկ փոխ վարչապետ Թարեք Ալիկ ըսաւ, որ արաբական որե-



Պուշ որոշած է ամէն գնով տապալել Սատտամ Հիւսէյնը
եւ երկիր պէտք չէ ակնկալել, որ պիտի չվնասուի տուժէ Իրաքի դէմ յարձակումէ մը, նոյնիսկ
Շար.՝ Էջ 10

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԾՆՇՈՒՄՆԵՐԸ ԱՆՏԵՍԵԼՈՎ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԹՈՒՐԳԻՈՅ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹՈՒԱԿԱՆ ԶԱՌԱՋԱՐԿԵՑ

Եւրոպական Յանձնաժողովը, հակառակ ամերիկեան մեծ ճնշումներուն, երկր թուրքիոյ հետ անդամակցութեան գծով բանակցութեանց սկսման թուական չէ առաջարկած՝ յայտնելով, որ Անգարա տակաւին մարդկային իրաւանց մարտին մէջ քաղաքական չափանիշներուն չէ հասած:

Եւրոպական Միութեան ընդարձակման մասին տարեկան իր տեղեկագիրը ներկայացնելով՝ Յանձնաժողովը Յանձնաժողովը Պրիւքսէլի մէջ յայտնած է, որ 10 երկիրներ, ներառեալ Կիպրոս, Դեկտեմբերին կրնան աւարտել անդամակցութեան գծով բանակցութիւնները եւ 2004ին Միութեան միանալ, պայմանաւ, որ իրլանտացիք ծրագիրը ընթաց-

քէ դուրս չբերեն: Պերլինի Պատին փոխարինման 13 տարի ետք, Ե. Միութեան գործադիր մարմինը յայտնած է, թէ նախկին համայնավար արեւելեան եւրոպական պետութիւնները, ինչպէս Լեհաստան եւ Հունգարիա, պատրաստ են մրցելու՝ Ե. Միութեան միակ շուկային ներս՝ տնտեսական եւ ընկերային եր-

կար եւ դուարին բարեկարգումներէ ետք: Յանձնաժողովը ըսած է նաեւ, որ Կոնստանտինոպոլի պիտի զարգանայ 2007ին իսկ Ե. Միութեան անդամակցելու համար Պուլկարիոյ եւ Ռումանիոյ ճիգերուն՝ պիտի Պայքանեան տազնապալի շրջանը հասցնելով, եթէ անոնք փոխանցման ներկայ ճիգերուն թափ տան:

ԹՈՒՐԳԻՈՅ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ ՊԵՏ Ե ԸԼԼԱԼ. Կ'ԸՍԷ ՈՒԱՇԻՆԿԱԹԸՆ

Տեղեկագիրը գովասանքով արտայայտուած է թուրքիոյ մէջ կատարուած նորագոյն բարեկարգումներուն մասին, որոնց կարգին խաղաղ ժա-

Շար.՝ Էջ 2

ԻՍՐԱԵԼԻ ՄԵՋ

ԲՆԱԿԵՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ ԽԱՂԱՔԱՐՏ՝ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պենիախ Դըն էլիագար բանակին հրահանգեց քանդել Այսրյորդանանի մէջ ապօրինի կերպով կառուցուած բնակեցման վայրերը: Նախարարին որոշումը գինք ճակատումի գիծին վրայ կը դնէ բնակեցման վայրերու ղեկավարներուն գիծաց, որոնք գինք կ'ամբաստանեն Աշխատաւորական կուսակցութեան ձախակողմեան թեւին գոհացում տալու յանցանքով յառաջիկայ ամիս տեղի ունենալիք ընտրութիւններուն սեմին: Յառաջիկայ ամսուան ընթացքին Աշխատաւորական

կուսակցութեան ղեկավար ընտրութիւնները պիտի կայանան: Պաշտպանութեան նախարարութեան կողմէ հրահանգուած յայտարարութիւն մը յայտնեց, որ գինուորները երկր երեք պարագայ շարժական տնակներ հեռացուցին երեք տարբեր վայրերէ՝ գործադրութեան ղեկով Պըն էլիագարի հրահանգը: Նախարարը ըսած էր, թէ տնակները, որոնք գետեղած են Այսրյորդանանի պաղեստինեան քաղաքներուն նայող բլուրներուն վրայ, պէտք է հեռացուին, որովհետեւ

Շար.՝ Էջ 10

ՇԱՅԱՍԱՆԻ ՄԵՋ

Յ. Յ. Դ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՅԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ՝ ՏԱՐԲԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՅԵՏ



Հ. Յ. Դ. «Միմն Վրացեան» կեդրոնին մէջ երկր հանդիպում մը տեղի ունեցաւ Հ. Յ. Դ. եւ Նոր Համայնավարներ Կուսակցութեան (ՀՆԿԿ) միջեւ: Հ. Յ. Դ. Բիրոյի անդամ ընկ. Վահան Յովհաննիսեան, Հ. Յ. Դ. Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ ընկ. Արմեն Ռուստամեան եւ Ազգային Ժողովի Հ. Յ. Դ. խմբակցութեան ղեկավար ընկ. Արուստ Կարդաբեան հանդիպում ունեցաւ ՀՆԿԿի ներկայացուցիչներ Եւրի Մամուկեանի, Հրանդ Ոսկանեանի եւ Մե-

Շար.՝ Էջ 9

ԱՐԽԱԶԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ԿԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ՝ ԲՆԱԿՑՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Երկրորդ այցելութեան մը համար Վրաստան կը գտնուի Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրեան: Ան երկր հանդիպում ունեցաւ իր պաշտօնակիցին՝ Նինո Պուրճանաձէի հետ. արժարժուած է արխազական երկաթուղիի վերաբան հարցը: Սաչատրեան ինչպէս, որ «Հայաստան կը գտնուի երկաթուղային շրջափակման մէջ, որուն պատճառով կ'արգելակուի երկրին տնտեսական կարգացումը»:

Շար.՝ Էջ 2

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երկր առաւօտուն, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն եւ տեսակցութիւն մը ունեցաւ Արամ Ա. կաթողիկոսին հետ: Պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց վեհափառ հայրապետին, որ սիրալոյսով կերպով հովանաւորեց «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» մարկանշակութային համալիրին բացման հանդիսութեան եւ իր անձնական մասնակցութիւնը բերաւ անոր եւ այդ առիթով կապմակերպուած հանգանակութեան ճաշկերպին:

Վեհափառը, իր կարգին, անդրադարձաւ նոր կեդրոնի մը ապագուտ առաքելութեան եւ պայն նկատեց սփիւռքահայութեան սիրտը հանդիսացող լիբանանահայ գաղութին ամենէն կարեւոր կեդրոններէն մէկը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԱՐՏԱԲԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իրաքի դեսպան Նեպիլ Ժանապին, որ Համմուտի յանձնեց իրաքի իր պաշտօնակիցին՝ Նաթի Սապրիի նամակը, որուն մէջ Համմուտը տեղեկ կը պահուէր, թէ զինքի միջազգային քննիչները պիտի վերադառնան Իրաք:

● ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԵԱՆ նախարար Ղազի Արիտի երէկ մերժեց Իրաքը ոմբակոծելու ամերիկեան սպանակիչները եւ դատապարտեց Միացեալ Նահանգներու կողմէ ներկայացուած բոլոր պատճառաբանութիւնները: «Իրաքի պաշարումը ամբողջ արաբական աշխարհին պաշարումը կը նշանակէ եւ կը միտի տկարացնել շրջանը՝ պաշտպանելով Իսրայէլի գոյութիւնը», ըսաւ Արիտի:

● ՄՇԱԿՈՑԹԻ նախարար Ղասսան Սալամէ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Չեխիոյ դեսպան Մարք Աբու-Լիլը, որուն հետ քննարկեց Պէյրութի մէջ յառաջիկայ 18, 19 եւ 20 Հոկտեմբերին կայանալիք Ֆրանսախօս երկիրներու կազմակերպութեան վեճաժողովին պարտաստութիւններուն առնչուած հարցերը:

● ԵԼԵՒՈՒՍՏՔԻ նախարար Ֆուադ Սիմիորա «ԵՄ. ԷՅ.» ապահովագրութեան ընկերութեան կազմակերպած հանդիպումին ընթացքին յայտնեց, որ կառավարութիւնը լուստես է «Փարիզ - 2» վեճաժողովին գծով եւ կը ջանայ տնտեսութիւնը գետեղել ճիշդ հունի մէջ:

● ԸՆԴՀԱՆՈՒՐ դատախազ Ատան Ատտուժ երէկ խմբագիրներու սենտիքայի նախագահ Մըլէմ Քարաճի յայտնեց, որ լրագրողներուն պիտի չարգելուի ներկայ գտնուիլ պատկերասփիւռի «Էմ. Թի. Վի.» կայանի դատապարտութեան, որ տեղի պիտի ունենայ Շարաբ օր:

● ԱՐԱՒԻ բարգաւաճման յանձնախումբը երէկ շարունակեց Ուազգանի գետին շուրջ իր աշխատանքները եւ գետեղելի յատուկ սարքեր օգտուելու համար գետին շուրջերէն: Աշխատանքին անձամբ հսկեցին յանձնախումբի նախագահ Քապլան Քապլան եւ պատասխանատու այլ պաշտօնատարներ: Միւս կողմէ, իսրայէլեան օդուժը շարունակեց իր բոխքները Սուրի, Ղաժարի, Համարիի եւ Պաուպար Ֆաթիմայի վրայ:

ՆԱԽԱԳԱՇ ԾԻՐԱՔ ԸՆԴՈՒՆԵՑ ԴՐՐԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիլ Դրրի, որ նախանցեալ օր պաշտօնակաճ այցելութեամբ ուղղուած էր Ֆրանսա վերահաստատեց, որ Ուազգանիի ծրագիրին բացումը պիտի կատարուի որոշուած թուականին՝ 16 Հոկտեմբերին:

Դրրիի ի պատիւ Ֆրանսայի Ազգային Ժողովին մէջ կայացաւ ընթրիք մը, որուն ընթացքին ան ներկաներուն բացատրեց Ուազգանիի ջուրերէն օգտուելու Լիբանանի իրաւունքները, որ կը հասնի 7 միլիոն խորանարդ մէթրի, մինչ իսրայէլի ապօրինի ձեռնմղումը 150 միլիոն խորանարդ մէթրը:

Դրրիի հաստատեց, որ Լիբանան ջուրերէն իր իրաւունքը պիտի պաշտպանէ՝ ՄԱԿէն պահանջելով, որ ցամաքային «Կապոյտ Գիծ»-ին նման սահման մը ճշդէ նաեւ Ուազգանիի մէջ:

Դրրիի յոյս յայտնեց, որ Ուազգանիի ջուրերուն հարցով Ֆրանսա պարակցութիւն կը յայտնէ Լիբանանի: Ան ներկաները տեղեկացուց նաեւ Հարաւի մէջ իրագործուող իսրայէլեան յարձակումներէն եւ իսրայէլեան օդուժի կատարած թռիչքներէն:

Անդրադառնալով Լիբանանի մէջ սուրիական ուժերու գոյութեան եւ լիբանանեւսուրիական յարաբերութիւններուն՝ Դրրիի առաջինը

նկատեց անհրաժեշտ եւ երկրորդը՝ հեպասահ եւ գերապանց մակարդակի վրայ:

Ֆրանսախօս երկիրներու վեճաժողովին մասին Դրրիի դրուատեց Ֆրանսայի պարակցութիւնը՝ նշելով, որ անիկա պիտի նպաստէ Լիբանանի բարգաւաճման եւ դիրքին:

Լիբանանի մէջ քրիստոնէաներու վիճակին մասին հարցումի մը պատասխանելով՝ Դրրի յայտնեց, որ Լիբանանի մէջ գոյութիւն ունի «ժահր» մը, որ կը կոչուի համայնքային դրութիւն եւ վստահեցուց, որ Լիբանան ճանչցուած է իբրեւ բազմակրօն երկիր եւ Լիբանանի մէջ չի խօսուի քրիստոնէաներու կամ իսլամներու մասին՝ այլ լիբանանցի քաղաքացիներու մասին:

Իրաքի դէմ կատարուած ամերիկեան սպանակիչներուն առնչութեամբ՝ Դրրի յայտնեց, որ ինք դէմ է Իրաքի վարչակարգին, սակայն կը պարմանայ, որ իսրայէլ իրաւունք ունի ստեղծելու հաւաքակաճ քանդուի վէճեր, իսկ Իրաք՝ ոչ:

Դրրիի Էլիզէի պալատին մէջ տեսակցութիւն մը ունեցաւ նախագահ Ժաք Շիրաքի հետ, որուն հետ քննարկեց Միջին Արեւելքի վարչակազմները, ինչպէս նաեւ Լիբանան - Ֆրանսա յարաբերութիւնները քաղաքական եւ տնտեսական մակարդակի վրայ:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԹՈՒՐԳԻՈՅ...

Ծարուակուած Ա. Էջէն

մանակներու մահա-վճիռի ջնջումը եւ քիւրտ փոքրամասնութեան մշակութային յաւելելու իրաւունքները:

Ե. Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար Կուլթըր Վերհէօլըն Եւրոխորհրդարանին յայտնած է, որ Թուրքիոյ գծով է. Միութեան ռազմավարութիւնը արդիւնք տուած է, ակնարկելով Անգարայի նիւթական յաւելեալ օժանդակութիւնը տալու կարելիութիւնը:

Յստակ դարձնելով, որ տակաւին չափազանց կանխահաս է բանակցութեան ց սկսուածին համար թուական մը ճշդելը, Վերհէօլըն ըսած է, որ Միութիւնը պիտի ապահովէ, որ Թուրքիոյ առջեւ «դուռը բաց պիտի մնայ, սակայն անիկա պէտք չէ շեղի անհրաժեշտ փոփոխութիւններուն ձեռնարկելու իր պարտականութեան», շեշտած է ան:

Մ. Նահանգներ կոչ ուղղած են Ե. Միութեան ընդունելու մարդկային իրաւանց մարզին մէջ Թուրքիոյ արձանագրած յառաջ դիմութիւնը եւ անոր անդամակցութեան գծով յստակ հաւանակութիւն տան:

Կիպրոսի հարցերու Մ. Նահանգներու յատուկ պատուիրակ Թոմ Ուեսթըն կոչ ուղղած է Միութեան, որ անիկա արդար ըլլայ անդամակցութեան Թուրքիոյ թեկնածութեան հանդէպ, յայտնելով, որ անիկա կրնայ օժանդակել այս

տարի Կիպրոսի հարցին լուծման:

«Կը յուսանք, որ տեղեկագիրը առարկայական է եւ նկատի ունեցած է Թուրքիոյ իրագործումները», ըսած է ան Ե. Միութեան պաշտօնատարներու հետ տեսակցութեան մը առաջ:

Ան շեշտած է, որ Ուաշինկթըն չի կրնար Ե. Միութեան ըսել, թէ ինչ պէտք է ընէ, սակայն նաեւ ընդգծած է, որ Ե. Միութեան Անգարայի հետ յարաբերութիւնները «շատ կարեւոր են՝ Թուրքիոյ, Եւրոպայի եւ Մ. Նահանգներու ռազմավարական շահերուն դիտանկիւնէն»:

ՅՈՒՆԱՍԱՆ՝ ԶՈՒՇԱՒՈՐ

Յունաստան երէկ ողջունած է Եւրոպական Յանձնաժողովին թելադրանքները, թէ փոփոխութիւններուն 10 երկիրներ, որոնց կարգին բաժնուած

Կիպրոսը, 2004ին պէտք է միանան Միութեան, սակայն պարզացուցած է ապագայ խոչընդոտներէ:

Վարչապետ Քոսթա Սիմիթիս թղթաւ կիցներու յայտնած է, որ տեղեկագիրը «դրական է», սակայն «պէտք է շատ ուշադիր ըլլալ»:

Թուրքիա սպանա-ցած է Կիպրոսի հիւսիսային թրքական բաժինը կցել եթէ կղզին Միութեան միացուի առանց նախապէս լուծուած ըլլալու անոր բաժանման հարցը:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Շիրքի Սինա Կիւրէլ երէկ յայտնած է, որ Ե. Միութիւնը Կիպրոսի բաժանումը կրնայ վերջնական դարձնել, եթէ կղզին անդամ ընդունի՝ առանց անոր վերամիացման համար համաձայնութիւն մը ապահովելու:

ԱՐԽԱԶԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ԿԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ ...

Ծարուակուած Ա. Էջէն

Պորճանած է նշած է, որ մինչեւ վերջերս վրաստան կարծի դիրքորոշում ունէր այդ հարցին նկատմամբ, սակայն այս պահուն այդ դիրքորոշումը փոփոխեցման հակամէտ դարձած է: Ան արխապական երկաթուղիի վերաբացման հարցը առնչած է գաղթականներու վերադարձին:

Արմէն Խաչատրեան նաեւ ելոյթ ունեցած է վրաստանի խորհրդարանին մէջ: Ան յայտնած է, թէ Հայաստան շահագրգռուած է Հարաւային Կովկասի մէջ կայունութեան հաստատման եւ շրջանային անվտանգութեան ապահովումով: Ան նաեւ շեշտած է, որ տազնապնէր պէտք է քաղաքական լուծում ստանան: Հայաստանի Ազգային Ժողովի նախագահը նաեւ անդրադարձած է Հայաստանի եւ վրաստանի խորհրդարաններուն միջեւ առկա կապերուն, եւ անհրաժեշտ գտած է անոնց յաւելելու ընդլայնումը:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 11 Հոկտեմբեր 2002, կէսօրը ետք ժամը 3:45ին, Հայաստանի Պետական պատկերասփիւռն ուղիւցեց Շուշիի «ՎԱՐԱՆԴԱ» մանկական, պատանեկան եւ երիտասարդական երգչախումբին տասնամեակին նուիրուած յայտագիրը:

ԿՈՒՉՈՒԻ

● Հազուադէպ վաճառուուն մը կարիքը ունի վաճառող օրինորդի մը. 3 տարուան փորձառութեամբ: Դիմել՝ հեռ. 01-249222:

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԵՌՈՒԹԵԱՆ ԱՌԻՈՒՎ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 27 Հոկտեմբեր 2002ին Գիւտ Խաչի Կիրակին, պիտի տօնախմբուի Ս. Նշան Մայր Եկեղեցոյ անուանակոչութիւնը:

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատաղցոս ոչխար նուիրել, եւ կամ մասնակցիլ ճիւղական նուիրում, թող բարի ըլլան կապ պահել քաղականութեան քարտուղարութեան, հեռաձայնելով 01-981102/3 եւ կամ տեղ հօր 03-885941:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն մեր սիրելի ժողովուրդին, այսու կը յայտարարենք, թէ Կիրակի, 22 Սեպտեմբեր 2002ին, Ս. Նշան Մայր Եկեղեցոյ մէջ, դարբնակիչ 2000 տարեշրջանի շրջանաւարտներն՝ Սարգիս սրկ. Սարգիսեան քահանայական ձեռնադրութիւն ստացաւ ձեռնաքննութեան արարողութեան, հեռաձայնելով 01-981102/3 եւ կամ տեղ հօր 03-885941:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հ. Մ. Բ. Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱՃԻՂ ՍԿԱՆԻՍԿԱՆ ԿԵՐԱՍՈՒՄ

Հ. Մ. Բ. Մ. Անթիլիա մասնաճիւղի սկանուական խորհուրդն ու խմբապետական կազմը կը իրաւունք իրենց տարագաւորները մասնաճիւղի վերանուտի առաջին հաւաքին, Կիրակի, 13 Հոկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 9:00ին, «Արալեան Հ. Մ. Բ. Մ.» մարզաշաղկապային համալիրէն ներս:

Նոր անդամներ կ'ընդունուին ամեն Կիրակի առաւօտները նոյն վայրին մէջ:

Հ. Մ. Բ. Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ՄԱՍՆԱՃԻՂԻ ՍԿԱՆԻՍԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄՔ Առողջապահութեան նախարար ՍԼԵՅՄԱՆ ՖՐԵՆՏԻԻ

Հայ Ազգային Բուժարանի Խճամակագրու խորհուրդը Պատիւը ունի ձեռնարկելու

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԲԱՅՏԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԵԱՆ (Նուրբ ձափոնի ժողովուրդին կողմէ)

Ուրբաթ, 11 Հոկտեմբեր 2002, կէսօրը ետք ժամը 2:00ին, Ազուրիի Հայ Ազգային Բուժարանին մէջ:

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՒ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԱՐՈՆԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԸ

Արամ Ա. կաթողիկոս երէկ Անթիլիասի մայրավանքին մէջ ընդունեց Պաղեստինի, Երուսաղէմի եւ Յորդանանի Մարոնի պատրիարքական փոխանորդ Փոյ Սայյահ արքեպիսկոպոսը: Այցելութեան հիմնական նպատակն էր վեհափառ հայրապետը տեղեակ պահել Պաղեստինի եւ Երուսաղէմի այժմու կացութեան եւ յատկապէս քրիստոնէայ եկեղեցիներու դիմագրուած դժուարութիւններէն: Երկրորդ, վեհափառ հայրապետին հետ խորհրդակցելու յարաջիկայ Յուլիանի Բրիտանիոյ մէջ տեղի ունենալիք համագումարին մասին, ուր Արամ Ա. հրաւիրուած է իբրեւ գլխաւոր բանախօս:

Սոյն հանդիպումը նաեւ առիթ մը եղաւ քննարկելու Միջին Արեւելքի Եկեղեցիներու խորհուրդի եւ ընդհանրապէս շրջանէն ներս քրիստոնէայ եկեղեցիներու փոխ յարաբերութեան կապուած հարցեր: Արամ Ա. կաթողիկոս կարեւորութեամբ շեշտեց միջքրիստոնէական գործակցութիւնը աւելի ամրապնդելու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ քրիստոնէայ - իսլամ երկխօսութեան նոր մղում տալու հրամայականը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԵՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԱՍԵՆՈՒՅՔ

Կազմակերպութեամբ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԻՐԱԿԵՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆՈՒԹԵԱՆ

Գործակցաբար ԽԱԶԵՐ ԳԱԼՈՒՍԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵՒՐՈՆԻՆ

Դասընթացները պիտի սկսին Սոյնմբեր 5ին սկսեալ, ամեն Երեքշաբթի եւ Կինջաբթի օրերը, երկուշաբթի ժամը 7:00էն 9:00, կաթողիկոսարանի խաչքա Փալուստեան մանկավարժական կեդրոնէն ներս, Անթիլիաս:

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԱԽՍՈՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

Կազմակերպութեամբ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԶՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԵՒՆ

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, Անթիլիաս

Սոյնմբեր 5ին սկսեալ, 2002, ամեն Երեքշաբթի, առաւօտեան ժամը 10:30էն 12:00:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԿԱՐԿԱՉ» ԵՐԳՉԱՆՈՒՄԻՄ ԿԵՐԱՍՈՒՄ ԵՐԳՉԱԽՈՒՄԻ ՓՈՐՉԵՐՈՒ

Գեղ. դեկավար եւ խմբավար **ՉԱԲԱՐ ԲԵՇԵՇԱՆ**

Մանկական խումբ.- Ա. - Գ. դասարանի աշակերտներ, Շաբաթ կէսօրը ետք ժամը 3:00էն 4:00: Պատանեկան խումբ.- Դ. - Ե. դասարանի աշակերտներ, Ուրբաթ կէսօրը ետք ժամը 4:00էն 6:00: Շաբաթ առաւօտեան ժամը 10:00էն 12:00: Երեք պատանեկան խումբ.- Ը. - ԺԲ. դասարանի աշակերտներ, Ուրբաթ երեկոյեան ժամը 6:30էն 8:00: Նորեկներու անդամագրութեան համար դիմել խմբավարին՝ հեռաձայնելով 01-265899 եւ 03-442365 քիւրուստ:

Փորձերը տեղի կ'ունենան Համազգայինի «Լեւոն Շանթ» մշակութային կեդրոնին մէջ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԿԱՐԿԱՉ» ԵՐԳՉԱԽՈՒՄԻ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱԽՈՍՈՂԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻՎ

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը յայտարարէ, որ Նշան Փալանձեան ձեռնարանի ուսանողական գիշերօթիկ բաժնին մէջ մնացած են սահմանափակ քիւրով սենեակներ, որոնք տրամադրելի են ուսանողներու:

Փափաքողներն կը խնդրենք կապ հաստատել հետեւեալ քիւրուստ եւ կամ անձամբ ներկայանալ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ, Նշան Փալանձեան ձեռնարան:

Հեռաձայնի քիւրուստ՝ 01 - 372455, 01 - 375409 եւ 03 - 549917

E - mail Hamazcen@cyberia.net.lb

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

Անանուն գրողի մը «Հարցազրույց Աստուծոյ հետ» խորագրեալ մէկ գրութիւնը համացանցին վրայ տեղադրուելով հասած է միլիոնաւոր մարդոց՝ ներշնչելով ու առիթներ տալով զանազան, եղափոխելով շատերու կեանքը:

Գրութիւնը արդէն քարգմանուած է բազմաթիւ լեզուներու՝ ֆրանսերէն, գերմաներէն, իտալերէն, սլովակերէն, հոլանտերէն, ֆինլանտերէն, հունգարերէն, ցեքերէն, չինարէն: Համացանցին վրայ կայքեր սահմակներու ցուցադրութիւններ պատրաստած են այս գրութեամբ հրատարակուած են նաեւ գիրքեր, որոնց իւրաքանչիւր էջը բնութեան գեղատեսիլ եւ հոգեթով լուսանկարի մը կողքին կ'ընդգրկէ «հարցազրույց»ի մէկ տողը:

Ստորեւ կը ներկայացնենք. «Հարցազրույց՝ Աստուծոյ հետ»-ի հայերէնի առաջին քարգմանութիւնը կատարուած անգլերէնէ:

Երազեցի, թէ հարցազրույց մը կը կատարեմ Աստուծոյ հետ. «Ուրեմն կ'ուզես հարցազրույց մը ընել հետս» հարց տուաւ Աստուծոյ:

«Եթէ ժամանակ ունիք», ըսի: Աստուծո ժպտաց՝ «Իմ ժամանակս յաւերժութիւնն է, ինչ հարցումներ ունիս մտքիդ մէջ»:

«Մարդկութեան մասին ի՞նչն է, որ ամէնէն աւելի կը զարմացնէ ձեզ»:

Աստուծո պատասխանեց, «Եթէ անոնք կը ձանձրանան մանկութենէ, կը փութան մեծանալու, իսկ յետոյ կը տեսնան մանուկներ դառնալ վերստին»:

«Եթէ կը կորսնցնեն իրենց առողջութիւնը դրամի տիրանալու համար, եւ յետոյ՝ կը կորսնցնեն իրենց դրամը առողջութիւնը վերագտնելու համար»:

«Եթէ տագնապելով ապագային մասին՝ կը մոռնան ներկան եւ, այսպիսով, ո՛չ ներկային մէջ կ'ապրին եւ ո՛չ ալ ապագային»:

«Եթէ կ'ապրին այնպէս, որ կարծես երբեք պիտի մեռնին եւ կը մահանան այնպէս մը, որ կարծես բնաւ չեն ապրած»:

Աստուծո ձեռք բռնեց ու պահ մը լուռ մնացինք, ապա հարցուցի:

«Որո՞նք են կեանքի կարգ մը դասերը, զորս, իբրեւ ծնող, կ'ուզես զաւակներդ սորվին»:

Աստուծո ժպտով մը պատասխանեց.

«Գիտնալ, թէ կարելի չէ ստիպել ոեւէ մէկուն, որ սիրէ զիրենք, այլ կարելի է միայն իրենց անձը սիրելի դարձնել»:

«Գիտնալ, թէ լաւ չէ իրեն անձը բաղդատել ուրիշներուն հետ»:

«Գիտնալ, թէ հարուստ անձը ան չէ, որ ունի ամէնէն աւելին, այլ ան, որ ունի նուազագոյն կարիքները»:

«Գիտնալ, թէ քանի մը երկվայրկեան կ'առնէ միայն սիրած անձի մը խոր վէրքեր պատճառելը, իսկ այդ վէրքերը բուժելը կ'առնէ տարիներ»:

«Գիտնալ, թէ ինչ է ներքը՝ ներքով ուրիշներուն»:

«Գիտնալ, թէ անձի կան, որոնք խորապէս կը սիրեն զիրենք, բայց պարզապէս չեն գիտեր ինչպէս արտայայտել կամ ցոյց տալ իրենց սէրը»:

«Գիտնալ, թէ երկու հոգի կրնան նայիլ միեւնոյն բանին եւ զայն տեսնել տարբեր ձեւով»:

«Գիտնալ, թէ յաճախ բաւարար չէ ներել ուրիշներուն, այլ պէտք է նաեւ ինքզինքին ներել»:

«Եւ գիտնալ, թէ ես հոս եմ... միշտ»:

Թարգմանեց՝ ԽԱԶՐԻ ՄՈՒՐԱՍՏԵԱՆ

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԿԱՍ Կ'ԸՆԵՆ ՓՕԼԻԿԼՕԹ ԲՈԼՆԻ ԾՐՋԱՆԱԽՐՏՆԵՐԸ

«... Կ'աշխատիմ որպէս ոսկերչական կադապրադոր Պորձ Համուտի մէջ: Ընտրիի Փօլիկլօթի եւ ընկերներէս աւելի կը գնահատուիմ եւ կը վարձատրուիմ...»:

ՍԱԳՕ ԵԱՆԵՐԵԱՆ

ONE SECOND IS ENOUGH... Արկածը կը Պսսաչի երկվարկեանի ՄԸ ՄԷԶ...



...BUT WE USE THEM ALL. ...Իսկ ՄԵՆՆԵՆ ԵՆՆԵՆ ԱՄԵՆ ԵՐԿՎԱՅՐԿԵԱՆ.

ԱՏՀԻԼ AFHIL

Աֆտոնի Ընդ, Բ. Յարկ, Գեռ. եւ Յարկ. (01) 262231-242556-242557 Կրտ. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

ԲԱՅ ՆԱՄԱԿ

1 Հոկտեմբերին հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարանին մէջ տեղի ունեցած է Ս. Թարգմանչաց տօնին նուիրուած աշակերտական հաւաք մը, որուն աւարտին վարժարանին երկրորդական բաժինի աշակերտները ստորագրեցին Հայաստանի եւ Սփիւռքի մշակութային մարզի պատկան մարմիններուն ուղղուած ստորեւ տրուած բաց նամակը, որ կը վերաբերի 2003 թուականը իբրեւ հայոց գիրքու գիւտի 1600ամեակի յորելանակաւ տարի հռչակելուն:

Հայաստանի գիտութեան եւ կրթութեան եւ մշակույթի նախարարներուն,

Սփիւռքահայ մշակութային կազմակերպութիւններուն,

Սփիւռքահայ կրթական հաստատութիւններու ղեկավար մարմիններուն,

Հայոց գիրքու գիւտի թուակաւոր մասին հայկական եւ միջազգային պատմագիտութիւնը առայսօր չէ հասած բոլորին կողմէ ընդունելի եզրակացութեան: Տարբեր պատմաբաններու մօտ անկապ կը տարուբերի Յ. Ք. 380ական թուականներու վերջերուն եւ 400ական թուականներու առաջին քառորդին միջեւ: Հետեւաբար գրեթէ անկարելի է անսխալ ճշդել հայ գիրքու գիւտին տարեդարձը, եթէ այդ ճշդումին հիմք պիտի ծառայէ միայն պատմագիտական փաստը:

Հայ ժողովուրդը բնականաբար կ'ուզէ արժանի շուքով տօնել իր գիրքուն ստեղծման յոբելեանները:

Այստեղ մեզի օգնութեան կը հասնի նախընթացի գործօնը՝ ընդունելի ձեւով լուծելու համար թուականի հարցը: Հայ գիրքու գիւտի տարեդարձին նշանակաւ պարագային, այդ նախընթացը բարեբախտաբար գոյութիւն ունի: Խօսքը կը վերաբերի 1913ին Կ. Պոլսոյ պատմաբաններուն որոշումով գիրքու գիւտի 1500ամեակի տօնակատարութիւններուն, որոնք անցան մեծ շուքով, յատկապէս Պոլսոյ եւ հայկական արեւմտեան զաւառներուն մէջ:

Հիմնուելով այս նախընթացին վրայ՝ կոչ կ'ուղղենք ձեզի 2003 թուականը յայտարարել հայոց գիրքու գիւտի 1600ամեակի տարի եւ նախապատրաստուիլ զայն տօնել բովանդակալից ծրագրով՝ համագային կարողութեամբ:

Կը կարծենք, որ նոյնիսկ աւելի ճիշդ կ'ըլլայ յայտարարել 1600 ամեակի նշանակաւ եւ 2003 - 2006 տարիները նուիրել այս շրջադարձային եւ հսկայ իրագործումի արժեւորումին:

Յարգանքով՝ Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանի Երկրորդական Բաժինի աշակերտներ

1 Հոկտեմբեր 2002 Պէյրուզ, Լիբանան

ԼՈՒՐԵՐ ՉԱՒԱԽՔԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՎ

Վրաստանի արտաքին գործոց նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութեան տնօրէն Քախա Միխարուլիձէ «Փրայմ Նիլուզ» լրատու գործակալութեան տուած հարցազրույցի մը մէջ յայտարարած է, որ պաշտօնական երեւանը չէ դիմած Սամցխէ-Ջաւախքի շրջանին մէջ Հայաստանի հիւպատոսարան բանալու առաջարկով:

Ըստ Ք. Միխարուլիձէի, հիւպատոսարան բանալու կարիք չկայ, որովհետեւ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ այցազրային գրութիւն գոյութիւն չունի: Միեւնոյն ժամանակ ան յայտնած է, որ եթէ հայկական իշխանութիւններէն հիւպատոսարան բանալու պաշտօնական խնդրանք ստացուի, ապա թիֆլիսի մէջ այդ խնդրանքը կը քննարկուի սահմանուած կարգով:

«ՎԻՐՔ» ԿԸ ՍՊԱՍԵ ԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ջաւախքի մէջ գործող հայկական «Վիրք» կուսակցութիւնը կը ծրագրէ մօտ օրէն իր համագումարը կազմակերպել: «Վիրք»-ի ղեկավար Դաւիթ Ռոստակեան «Փրայմ Նիլուզ» լրատու գործակալութեան յայտնած է, որ կուսակցութեան համագումարը, որ հաւանաբար տեղի պիտի ունենայ Հոկտեմբերին, նուիրուած պիտի ըլլայ Վրաստանի արդարագատութեան նախարարութեան մէջ «Վիրք»-ի զբանջման հարցին եւ, նախարարութեան զբաղանքին որոշումին պարագային, 2003 թուականի խորհրդարանական ընտրութիւններուն կուսակցութեան: Դ. Ռոստակեան նշած է, որ «Վիրք» զբանջուելու խնդրանքով բազմիցս

դիմած է Վրաստանի արդարագատութեան նախարարութեան, սակայն այդ հարցը մինչեւ հիմա անլուծ կը մնայ: Դ. Ռոստակեանի կարծիքով, «Վիրք»-ի զբանջման պարագային կուսակցութիւնը իրական կարելութիւն պիտի ունենայ իր ներկայացուցիչները ուղարկելու խորհրդարան եւ այնտեղ պաշտպանելու Ջաւախքի մէջ ապրող հայ բնակչութեան շահերը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ԴՈՒՍԻԱՆ ԿԸ ՆԿԱՏԵ ԱՆՎՏԱՆ ԳՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Հայաստան Ռուսիան կը նկատէ Անվտանգութեան երաշխիք «Աշխարհի հայերը դարբերու սահմանագիծին եւ միջազգային յարաբերութիւններու հրատարակութեան» միջազգային համաժողովի առաջին նիստին Ռուսիոյ գիտութեան, արդիւնաբերութեան եւ գիտարուեստի նախարար Իլիա Քլեպանով յայտնած է, որ Ռուսիոյ վարչապետ Միխայիլ Քասիւանով 3 Նոյեմբեր 2002ին պաշտօնական երկօրեայ այցելութիւն պիտի տայ Հայաստան: Ըստ Ի. Քլեպանովի, Հայաստան Ռուսիան կը նկատէ անվտանգութեան գլխաւոր երաշխիք:

Ան նշած է նաեւ, որ Մոսկուա եւ Երեւան բանակցութիւններ կը վարեն Արխագիոյ մէջէն երկաթուղային հաղորդակցութիւնը վերականգնելու համար:

Ի. Քլեպանով աւելցուցած է, որ այս հարցը «կախուած է Վրաստանի քաղաքական ղեկավարութեան որոշումէն»: Քլեպանովի կարծիքով, այս հարցին լուծումը թոյլ պիտի տայ, որ Ռուսիա եւ Հայաստան ընդլայնեն առեւտրական-տնտեսական կապերը: Ան յայտնած է նաեւ, որ Դեկտեմբերի սկիզբը Հայաստան եւ Ռուսիա նոր համաձայնագիրներ պիտի ստորագրեն զիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան եւ փոխադրութեան մարզերուն մէջ:


Նշենք, որ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Դեկտեմբերին պաշտօնական այցելութիւն պիտի տայ Մոսկուա:

Հայ Կաթողիկէ ՄԵՍՐՈՊԵԱՆ Արուեստից Վարժարան 20-ԱՄԵԱԿԻ ՆՈՒՐԵ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ Համակարգիչի լրիւ դասընթացք՝ ամսական միայն 25 հազար լ.ո. Windows, Word, Excel, PowerPoint, Outlook, Internet, Illustrator, Photoshop, Corel Draw, Quark Xpress, Access, Project, Visual Basic, Visual FoxPro, Dolphin, AutoCAD, AutoArchitect, 3D Studio Max, Cakewalk - Finale, Front Page, HyperText Markup Language...

ՆՈՐ ԳԻՐԵՐ

ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի մէջ վերջերս լոյս տեսած է հայ բանաստեղծութեան նուիրուած գիրք մը, որ կը բովանդակէ հայ դասական թանաքային ստեղծներու ստեղծագործութիւններէն 111 քերթուած: 50 է աւելի քերթուածներու գործերէն քաղուած այս հատընտիրը ձօնուած է հայ գիրքու գիւտի 1600ամեակին: Հատորին հրատարակութեան նախաձեռնած է Մեսրոպ արք. Աշճեան, որ վերջին տարիներուն նախանձախնդիր յանձնառութեամբ մշակութային գործունէութիւն կը ծաւալէ Հայաստանի մէջ՝ մեկենասներու օժանդակութեամբ գիրքեր հրատարակելով եւ նեցուկ կանգնելով հայ արուեստագէտներուն: Երախտաշատ այս աշխատանքներէն մէկն է «Հատընտիր հայ բանաստեղծութեան» հատորը:



Հայ Բանաստեղծութիւններ

Պարբերաբար կը հրատարակուին զբաղանք հատընտիրներ՝ զբառէր ընթերցողին, ուսանողին ու աշակերտին ներկայացնելու մեր գրողներուն, բանաստեղծներուն լաւագոյն ստեղծագործութիւններէն նմուշներ: Մեսրոպ արքեպիսկոպոս նպատակ ունեցած է այս հատորը լոյս ընծայելով Հայաստանի նոր սերունդին, պատանի ասմունքողներուն յանձնել հատոր մը, որ մատչելի ըլլայ իրենց արտասանելի քերթուած մը գտնելու: Իր խմբագրած այս գիրքին յառաջաբանին մէջ ան նշած է այս մասին՝ լիչելով նոյն ատեն նմանօրինակ հատընտիրներէ քաղուած քերթուածները:

Մեսրոպեան դասական ուղղագրութեամբ տպուած է հատորը: Նոյն հատորը հրատարակուած է նաեւ արեւելահայկական ուղղագրութեամբ, որպէսզի «չխրտչի Հայաստանի պատանին» եւ ընդառաջ երթայ արեւմտահայ զբաղանքութեան զանձերուն ծանօթանալու: Հատորին խմբագիր ու նախաձեռնող Մեսրոպ արք. Աշճեան կ'անդրադառնայ, թէ գուցէ ամբողջական-ներկայացուցչական հատընտիր մը չըլլայ այս, ու այդ առնչութեամբ կ'ըսէ.

«Որոշուածներէ, թէ ի յառաջագունէ գիտէինք, որ մեր կատարած ընտրութիւնը պարագայական պիտի ըլլար. խոստովանելիք նաեւ, որ թէեւ անկեղծ եղած ենք մեր ընտրութեան մէջ, գուցէ արդար չենք եղած, քանի այլապէս շատ գեղեցիկ բանաստեղծութիւններ կային, որոնք կրնային այստեղ գտնուիլ»:

Շատ ճիշդ ընտրուում մըն է այս, որովհետեւ մենք եւս միեւնոյն տպաւորութիւնը ունեցանք այս Հատընտիրը կարգալէ ետք, որովհետեւ նոյնիսկ «հիւրասիրուած» բանաստեղծներուն լաւագոյն գործերը բացակայ էին: Իբրեւ ներկայացուցչական ներկայութիւն տեղ չէր տրուած այլ արժանաւորներու: Նկատելի է այն, որ սրբազանը նախասիրական տրամադրութեամբ աշխատած է՝ նպատակ ունենալով նման օգտակար գործի մը շահեկանութիւնը Հայաստանի նոր սերունդին, նոյնպէս՝ արտասահմանի դպրոցներուն համար: Յիշենք, որ հատորը ունի դասագիրքի բնոյթ:

Ինչ կը վերաբերի ընտրուած հեղինակներուն, նկատի առնուած են միջնադարեան մատենագրութեան զանձերէն աւելի ուշ ժամանակաշրջանէն Նահապետ Քուչակ, Սայաթ Նովա, Խորէն եպս. Նար-Պէյ, 19րդ եւ 20րդ դարու բանաստեղծներէն քերթուածներ, արեւելահայ թղէ արեւմտահայ, մասնաւորաբար արեւմտահայ դասական քերթողներու գործերէն քերթուածներ:

Հայ գիրքու գիւտի 1600ամեակին առիթով կատարուելիք փառատօներուն նախապատրաստութիւն մըն է այս՝ յիշեցնելու համար հայրենիքի թէ Սփիւռքի դպրոցներուն պատասխանատուներուն եւ աշակերտութեան, որպէսզի իրենց կարգին պատրաստուին կազմակերպելու «Մեսրոպեան փառատօն»ներ: Մեսրոպ արք. Աշճեանի այս եւ մշակութային կեանքի զարգացման, ինչպէս նաեւ հայ հաւատքին ամրացման ու տարածման համար կատարած աշխատանքները, նախաձեռնութիւնները արժանի են գնահատանքի ու քաջալերանքի:

ՇԱՀԱՆ ԳՈՒՄԵՍ

30 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ 30,000\$ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՓՕԼԻԿԼՕԹ Թեքնիքը բոլոր կարիքաւոր եւ փայլուն սաներու ԵԱՆՕԹ. Նախապատուութիւնը պիտի տրուի կանուխ դիմողներուն Արձանագրութիւն ամէն օր ՓՕԼԻԿԼՕԹ քոլէճ, Տորա 01 - 251 320 Տէր եւ Գնորէն ՊԵՏՐՈՍ ՇԵՄԵՍԵԱՆ

ՆԱՍԱԿ՝ ԸԱՅՐԵՆԻԷՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԵԱՆ ԱՇԽՈՒԺՈՒԹԻՒՆ

Փակեցինք 2002 տարուան Սեպտեմբեր ամիսը Աշխուժութիւնը այստեղ կը վերաբերի գրասալընկնե-րու ստեղծած եռուզեռին՝ Երեւանի կեդրոնական փողոցներուն, ճաշարաններուն, պանդոկներուն, սրճարաններուն մէջ թէ վերանորոգութիւններու եւ արձակուրդներու պատճառով հատ ու կենտ կազմակերպուած մշակութային միջոցառումներուն:

Աշխուժութիւնը յայտնի էր նաեւ հանրապետութեան ու Արցախի տարածքին գրասալընկնեցի հրապուրող աւանդական վարքերուն մէջ:

Արցախի պարագային այդ ամսուան ընթացքին եղան բազմաթիւ օրեր, երբ սահմանափակ թիւով պանդոկները լեցուն էին եւ տեղ չկար սրբազան այդ շրջանը այցելել փախաբողներուն:

Տաթևի վանքի պահակին համաձայն, ոչ միայն Սեպտեմբերին, այլ ամբողջ այս ամառային եղանակին գրասալընկնեցի մեծ հոսք եղած է եւ, ըստ իրեն արտասահմանէն այցելողներու թիւը անցած է 15 հազարը:

Նոյնպիսի վկայութիւն կու տայ Հաղպատի պահակը, Նորավանքի քանդակագործ-պահակ-ուղեցոյց Մամուէլը: Այս երկու պահակները, մանաւանդ երկրորդը, հրաշալի պատմողներ են:

Ես բազմաթիւ անգամներ եղած եմ Նորավանք: Սակայն այս անգամ, առաջին անգամ ըլլալով, ընկերոջս հայկական պատմական յուշարձաններու վերաբերեալ անյազուրդ հետաքրքրութիւն ունեցող եղուկարդի պնդումով, ունկնդրեցի Մամուէլի բացատրութիւնները: Միայն խոստովանելով, որ Մամուէլի միջոցով առաջին անգամ տեսայ եկեղեցիին ետեւի մուտքի դուռին վերեւը պատկերուած Աստուծոյ նկարը, որ միշտ այնտեղ եղած է, սակայն յայտնութեան պէս բան մըն էր ինձի, այդ օրը: Ասիկա նաեւ յորդոր մըն է իմ կողմէս բոլոր գրասալընկնեցիներուն, որ օգտուի իրենց այցելած յուշարձաններուն մօտ կանգնած մարդոց տեղեկութիւններէն. աղբիւրով շատ աւելի իմաստալից կը դառնայ իրենց պտոյտը:

Սեպտեմբերը իւրայատուկ քաշողութիւն կը թուի ունենալ Հայ գրասալընկնեցիներուն համար: Արցախի ու Հայաստանի անկախութեան տօները, եղանակի յարաբերական մեղմութիւնը եւ վերջին տարիներուն յատկապէս այդ ամսուան օրերուն կազմակերպուած համահայկական նշանակութեան միջոցառումները նպաստած են, որ այդ ամիս Երեւան իջնող օդանավերը լեցուն ըլլան:

Այս տարի նոր նախաձեռնութիւն մը եւս աւելցաւ. «Կենցաղ» ծրագիրը, որ 21 Սեպտեմբերին նախորդող ու յաջորդող օրերուն, Երեւանի հրապարակներու վրայ, երաժշտական փառատօներուն կողքին, նաեւ հայկական «արեւահամ» միջոցներ ցուցադրելու ճիգ մըն է: Ծրագիրին գնահատումը չեմ ուզեր կատարել: Ինձի համար իւրաքանչիւր նախաձեռնութիւն, որ կը միտի Հայաստանը աւելի հրապուրելի դարձնել գրեթէ ինչ, միեւնոյն ատեն տեղի բնակիչներուն գործ ու հաճելի ժամանց մը կ'ապահովէ, խրախուսելի ու ողջունելի է:

Ժամանակն է ծրագրի մշակել, որպէսզի գրասալընկնեցիները Հայաստան գան տարուան միւս ամիսներուն: Հոկտեմբերը, օրինակ, ինձի համար աւելի հետաքրքրական ժամանակ է: Նախ եւ առաջ եղանակը շատ աւելի հաճելի է, քան Սեպտեմբերը: Այս մասին թող վկայեն այս տարուան սեպտեմբերեան այցելուները, որոնք երեւանեան շողօն խեղդուած՝ շրջաններ փախուստ կու տային, ուր պէտք է ըսել, Սեպտեմբերի կէսերուն արդէն ցուրտը զգալի կը դառնայ: Ապա եւ՝ Հոկտեմբերը մեր մշակութի մասին է, երբ թատերական ու երաժշտական ձեռնարկները զիրար կը հրմշտկեն ընտրութեան լայն հնարաւորութիւն տալով մեզի: Քիչ մը քարոզչական աշխատանք, քիչ մը ստեղծագործ ճիգ, եւ ձեռք կը վստահեցնեմ, որ Հոկտեմբերին ալ կ'ունենանք նոյն աշխուժութիւնը:

Օգոստոսը, որ միջազգայնօրէն ընդունուած է իրբեւ արձակուրդի ամիս, կարելի է անչափ հանգիստ ու հաճելի դարձնել Հայաստան այցելողին համար:

Ջրասալընկնեցի գրաւոր գործակալութիւնները արդէն պէտք է դիմեն նոր միջոցներու, նոր ժամանակացոյցներու եւ ուղեբիւլետներու, որպէսզի բոլոր պտոյտները հաճելի ըլլան: Ոչինչ պէտք է պատահականութեան թողուց: Այսինքն, եթէ աւանդական դարձած կիրակօրեայ ծիմիածին-Սարգարապատ պտոյտները անտանելի են օգոստոսեան շոգին, առնուազն պէտք է ճիգ թափել, որ մարդիկ Սարգարապատ այցելեն երեկոյեան կողմերը, երբ աւելի զով է: Եւ նման բարեփոխումներ բոլոր ուղիներու վրայ անհրաժեշտ կը դառնան այդ ամսուն:

Մէկ կողմէ ոլորտի աշխատողներուն ջանադրութեամբ, միւս կողմէ՝ պետական համապատասխան օգակներուն քարոզչական ու կազմակերպական նախաձեռնութիւններով, պէտք է ու կարելի է տարուան բոլոր ամիսները հրապուրելի դարձնել գրասալընկնեցիներուն, սեպտեմբերեան այս աշխուժութեան ինչ-որ համեմատութեամբ վարակելով տարուան բոլոր ամիսները:

Երեւանայացիքէ՛ք, ոչ, արդէն փորձով կրնաք նոյնիսկ չափել, թէ ինչ կը նշանակէ այդ Հայաստանի տնտեսութեան համար:

ԱԲՕ ՊՈՂԻԿԵԱՆ

ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
Այսու կը յայտնենք մեր հայրենակիցներուն, որ 2002 - 2003 տարեշրջանին համար սան - սանուհիներու կրթնագրաստի դիմումագիրները կ'ընդունուին մինչեւ օրստեղծակը, 1 Հոկտեմբերէ սկսեալ, ամէն Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը կ'օրէն տեղ Ժամը 2:30էն 4:30:
Ընդունման վերջին պայմանաժաման է 15 Նոյեմբեր 2002: Այս թուականէ ետք ներկայացուած դիմումագիրները կ'պիտի պիտի յառնուին:
Կը խնդրուի ծնողներէ անձամբ դիմումագիրները յանձնել մինչեւ վերոյիշեալ թուականը, Մարաշի Հայրենակցական Միութեան տունը:
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՐԱՇԻ
ԸԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԹՈՒՐԲԻԱ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԲԻԻ ԵՐԵՔ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐ ԱՃՈՒՐԴԻ ԿԸ ՀԱՆԷ

Թուրքիոյ մէջ աճուրդի դրուած են հուշակաւոր ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքիի «Լուսնեակ գիշեր խորի մէջ», «Առաջատանաւր փոթորկալի ծովուն մէջ» եւ «Նորտակուող նաւը» կտավները: Ծովանկարչին գեղանկարները կը պատկանէին «Մարմարապանք»ի որ սնանկացած էր 1994ին: Այս պատճառով սնանկութեան խորհուրդը որոշած է վաճառքի հանել զրամատան հարիւր գեղանկարները:

Թուրք մասնագէտները Այվազովսքիի աճուրդի դրուած երեք գեղանկարները դնահատած են իրբեւ ամէնէն թանկարժէքները գոյութիւն ունեցողներուն մէջ: «Լուսնեակ գիշերը խորի մէջ» գեղանկարին սկզբնական գին ճշդուած է հարիւր հազար տոլար, «Առաջատանաւր փոթորկալի ծովուն մէջ» գեղանկարին՝ քսան հազար տոլար, իսկ

«Նորտակուող նաւը» գեղանկարին՝ տասը հազար տոլար: Աճուրդի կազմակերպիչները կ'անկախ են, որ ծովանկարչին ստեղծագործութիւններուն գինները աւելի բարձրացում արձանագրեն աճուրդին ընթացքին:

ՄՈՆԻՏՈՐ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ԳՈՐԾԻՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Վերջերս Մոնրէպլի Հայ Կեդրոնին մէջ դասախօսած է սփիւռքահայ յայտնի արուեստագէտ Վարդան Մատթէոսեան՝ նիւթ ունենալով իր «Կոստան Զարեանի շուրջ» հատորը:

Փարիզի «Յառաջ» թերթը կը գրէ, թէ սփիւռքահայ գրող Կոստան Զարեանի գործունէութեամբ Վարդան Մատթէոսեանի հետաքրքրութիւնը սկսած է տակաւին ուսանողական տարիներէն: Եւ իր աշխատութիւնը ան կը նկատէ Զարեանի «կեանքին ու գործին շուրջ գոյացած առասպելական մշուշը ցրուելու» նպատակով դրուած մենագրութիւն: Հատորը կենսագրական նիւթեր չի պարունակեր Վ. Մատթէոսեան կը նշէ, որ Կ. Զարեանի կենսագրութեան ուսումնասիրութիւնը կը նմանի հանելուկներու լուծման, կեանքը՝ խճանկարի, իսկ կենսագրութեան պրպտումն ալ՝ ոստիկանական վէպի:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ազգային անվտանգութեան վարչութեան նախկին ղեկավար գօր. էտուարտ Սիմոնեանց Հինգշաբթի, 3 Հոկտեմբերին տուաւ մամուլի ասուլիս եւ նշեց, որ իր ղեկավարած «Ազատագրութեամբ» շարժումը պաշտպանութեան հասարակական կազմակերպութեան նպատակն է հանրութեան տրամադրել Հարաբարի հարցին լուծման առնչուող տեղեկութիւններ: Վերլուծելով ԵԱՀԿի Մինսքի համախաղաղահանգում վերջին այցելութեան արդիւնքները՝ ան յայտարարեց. «Հարաբարեան հարցին լուծումը անկարելի է միայն այդ խնդրին լուծման նուիրուած բանակցութիւններու սեղանին շուրջ: Լուծումը պէտք է գտնուի շրջանին եւ աշխարհի մէջ տեղի ունեցող քաղաքական գործընթացներուն ընդհանուր շրջագիծին մէջ»:
● ԵԱՌԱՔՄ 28 Սեպտեմբերին, Հայաստանի պաշտպանութեան փոխ նախարար գօր. Արթուր Աղաբէկեան այցելեց Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի «Փէշեքեթեան» կեդրոնը եւ հանդիպում մը ունեցաւ Կեդրոնական Կոմիտէին հետ: Հանդիպումը կայացաւ ջերմ մթնոլորտի մէջ: Աւելի քան մէկ ժամ տեւած սրտբաց խօսակցութեան ընթացքին քննուեցան Հայաստանն ու հայրենիքը մտահոգող հարցեր:

ԵՐԵՒՈՒՆԻ - ԵՐԵՒԱՆ ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Երեւանի բոլոր համայնքներուն մէջ տեղի կ'ունենան նախապատրաստական աշխատանքներ աւանդական դարձած էրբերուն - Երեւան տօնակատարութիւնը լաւագոյնս նշելու համար: Զեռնարկները տեղի պիտի ունենան 10էն 12 Հոկտեմբեր Երեւանի Հանրապետութեան հրապարակներ վրայ եւ համայնքներուն մէջ:

Այսպէս, 10 եւ 11 Հոկտեմբերին «Հմուտ Վարպետ» կեդրոնը Հանրապետութեան հրապարակին վրայ պիտի կազմակերպէ «Տարուան լաւագոյն Երգ» համերգային ծրագիրը եւ «Ամէնէն մեծ փիցցա» մրցումը:

12 Հոկտեմբերին պիտի կազմակերպուի տօնակատարութեան զլխաւոր ձեռնարկը՝ «Երբեք ունի» թանգարանին մօտ բացօթեայ բեմադրութիւն մը, որ պիտի ներկայացնէ Երեւանի պատմութիւնը հիմնադրութենէն մինչեւ մեր օրերը:

Նոյն օրը դէպի Հանրապետութեան հրապարակ տանող բոլոր փողոցներու խաչմերուկներուն վրայ պիտի ըլլան հիւրասիրութեան սեղաններ՝ մարզերու եւ Երեւանի բոլոր քաղաքներուն կողմէ, իսկ երեկոյեան համերգային ծրագիրներով հանդէս պիտի գան Ազգային օփերայի եւ պալէի ակադեմիական թատրոնի սիմֆոնիք նուագախումբն ու երգչախումբը՝ յօրինող գործիքաւորող Արա Գէորգեանի հետ:

Կ'ՈՒՋՈՒԻ

● AZADCO հաստատութիւնը կարիքը ունի վարպետ ատաղձագործի մը: Ըեռ. 01 - 682470:

ԳՐԱՒՈՒՄԸ ՕՐ

Հ. Յ. Գ. «ՌՈՍՏՈՍ» ԱՎՈՒՄԻՒՎ ԱՎՐՉՈՒԹԻՒՆ «ՄՈՎԱՍՏԻՔ» ՊԵՆՏՈՆ 24 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2002

ՀԱՐՅԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՅԱՆԿՈՒԹԻՒՆԸ ԱՆՎԵՐԱՊԱՀ ԶԷ

Անցնող շաբաթներուն Հայաստանէն հաղորդուած լրատուութեան հետեւողները անպայման պիտի նկատէին ուշադրաւ այն երեւոյթը, երբ Վրաստանի տարբեր պաշտօնեաները մէկը միւսի ետեւէն Երեւան կ'այցելէին: Ուշադրաւ էր նաեւ այն, որ այցելուները ընդհանրապէս ուժային կառուցներու ներկայացուցիչներ էին եւ անոնց այցելութիւնը տեղի կ'ունենար այնպիսի ժամանակ, երբ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին շատ խիստ սպառնալիքներ կ'ուղղէր թիֆլիսի:

Հակառակ որ պաշտպանութեան նախարար Դաւիթ Թեւզածէն նշեց, թէ իր այցելութիւնը Հայաստանն ուսու-վրացական լարուած յարաբերութիւններու հետ կապ չունի եւ իրբեւ թէ այցելութիւնը ծրագրուած էր Ռուսիոյ հետ յարաբերութիւններու սրուածէն դեռ քան առաջ, բայց այդ այցելութեան թէկուզ գուրադիպութիւնը եւ անոր յաջորդող պետական անվտանգութեան նախարար Վալերի Ուպուրժանիայի այցելութիւնը ենթադրել կու տան, թէ Վրաստան իր անվտանգութեան հետ կապուած ակնկալութիւն ունի Հայաստանէն:

Այդ ակնկալութեան դիմաց ընկանաբար Հայաստան եւս սպասելիքներ կրնայ ունենալ եւ, ըստ երեւոյթին, Հայաստանի սպասելիքները բաւարարուելու փորձ էր Մամսիւն-Ջաւախի մէջ Վրաստանի նախագահի լիազօր ներկայացուցիչ Թէյմուրազ Մոսիաշ-Վիլիի երեւան կատարած այցելութիւնը:

Այս բոլորին եթէ գումարենք Վարդան Օսկանեանի այն յայտարարութիւնը, թէ Հայաստան պատրաստ է միջնորդելու Ռուսիոյ եւ Վրաստանի միջեւ, եթէ իրեն առաջարկուի, կարելի է ենթադրել, որ Վրաստան, եթէ ոչ պաշտօնապէս, ապա ակնարկութեամբ խնդրած է Հայաստանի բարեխօսութիւնը: Նմանօրինակ ակնարկութիւն մը կատարեց նաեւ Սերժ Սարգսեան Մոսկուայի մէջ:

Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան Վրաստանի պաշտպանութեան նախարարին հետ հանդիպման ժամանակ լրագրողներուն դիմաց ընդգրծեց շրջանին մէջ կայունութեան պահպանման անհրաժեշտութիւնը եւ նշեց, «որ կան խնդիրներ, որոնց լուծումը, այնուհանդերձ, կախուած է նրանից, թէ ցանկանում ենք լուծել զարմք, թէ ոչ»: Իսկ հետագայ ջանքերը ցոյց կու տան, թէ վրացական կողմին մօտ հարցերը լուծելու ցանկութիւնը անվերապահ չէ:

Նոյն այցելութեան ընթացքին վրաց - ռուսական լարուածութեան օճախի՝ Փանքիսի կիրճի իրավիճակին մասին Վրաստանի պաշտպանութեան նախարարը յայտնեց, թէ՛ «հասել ենք նրան, որ այս պահին մենք պայմաններ ենք թեյագրուած, գործողութիւններն ընթանում են ըստ ծրագրուածի: մօտ ժամանակներ արդիւնքներ կը լինեն»: Իսկ եթէ սպասուելիք արդիւնքներ այն է, որ չեղէն ահաբեկիչները ռուսական սահմանագիծէն (Փանքիսի կիրճէն) Ջաւախք տեղափոխուի, ապա ընկերային ու տնտեսական ծանր պայմաններու տակ ապրող ջաւախքահայութիւնը չի կրնար չմտահոգուիլ իր անվտանգութեան սպառնացող այս իրադարձութիւններով: Երէկ մեծսէյթի թուրքեր տեղափոխելու ճիգերով, յետոյ թիթեական զինուորական ներկայութենէն, այժմ չեղէններէն եւ գուցէ դեռ չյայտարարուած ու չբացայայտուած այլ ծրագիրներէն ծագած մտահոգութիւնը չի կրնար փարատիլ Երեւան այցելած նահանգապետ Մոսիաշ-Վիլիի այն պնդումով, թէ՛ «երկրի իշխանութիւնները եւ նախագահ էտուարտ Շեւարտնանձէն առաջին հերթին ուշադրութեան կենտրոնում են պահում Մամսիւն-Ջաւախքի ընկերային-տնտեսական զարգացման հարցը եւ վերջին տարիների ընթացքում առաջին անգամ է, որ նման համապարփակ ծրագիր է մշակուած Վրաստանի շրջաններից մէկի համար»:

ԽԱՓԱԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉԱՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ
Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Դիմարկի դասընթացները կը սկսին Երկուշաբթի, 7 Հոկտեմբերին: Դասաւանդութիւնները կ'երկարին Երկուշաբթի Ուրբաթ, ժամը 1:30էն 6:00: Ստորեւ 2002 - 2003 ուսումնական տարեշրջանի Ա. կիսամեակի դասաւանդութիւնը:
1.- Ժամանակակից Հայոց լեզու I, II եւ III
2.- Հայոց լեզուի դասաւանդում մեթոդական
3.- Ընճական Հայոց Պատմութիւն I, II եւ III
4.- Հայոց Պատմութեան արիւրագիտութիւն
5.- Հայ արդի գրականութեան պատմութիւն
6.- Սփիւռքահայ գրականութիւն
7.- Մատենագրութիւն
8.- Աշխարհագրութիւն Պատմական Հայաստանի
9.- Հայ հոգեւոր եւ կրօնական հիմն գրականութիւն
10.- Գրաբար I, II
11.- Հայ ժողովուրդի բանահիւսութիւն
12.- Ներածական Լեզուաբանութեան
13.- Հիմնական գրականութիւն
14.- Հիմնական գրականութիւն
15.- Ընդհանուր հոգեբանութիւն
16.- Ներածական մանկավարժութեան
17.- Մանկավարժութիւն - Հոգեբանութիւն
18.- Գործնական մանկավարժութիւն
19.- Հայ մշակոյթ I (մանրանկարչութիւն - կերպարուեստ)
20.- Ժամանակակից Հայոց Պատմութիւն 3 (Օսմանեան կայսրութիւն)
21.- Ընդհանուր պատմութիւն I (Հիմն Արեւելք, Յունաստան)
22.- Ընդհանուր Պատմութիւն II (Հռոմ)
Առիթ պիտի ընձայուի մասնաւոր ուսանողներու, որոնք յատուկ նախասիրութեամբ պիտի ուզեն ընտրուիլ հետեւիլ յիշեալ դասաւանդութիւն մէկ մասին, ստանալով հիմնարկի համապատասխան վկայագիր:
Ետաքըրբողները կրօն անձամբ դիմել հիմնարկի գրասենձին՝ առաւօտեան ժամը 10:00էն 6:00 եւ կրան հեռաձայնել 01 - 375410 - 03 - 429685 թիւերուն:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՒՑԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

ԲԱՐՁՐ ԵՐԱՇՅՈՒԹԻՒՆ, ԹՈՒՆԴ ԽՄԻՉԵ ԵՒ ԽԵԼԱԳԱՐ ՊԱՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԱՒԱՐՏԻՆ ՀԵՏ ԿԸ ՍԿՍԻ ԱՅԼ ԿԵԱՆՔ ՄԸ՝ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԶԲՕՍԱՎԱՅՐԵՐՈՒ ԵՌՈՒՆ ԱՇԽԱՐՀԸ

Օրուան աւարտին եւ մայրամուտին հետ, երբ իւրաքանչիւր քաղաքացի իր գործէն յոգնած տուն կ'ուղղուի հանգչելու եւ օրուան հոգեքն ու դժուարութիւնները թօթափելու, այլ վայրերու մէջ նոր կը սկսի արթննալ եւ թափ առնել ուրիշ կեանք մը՝ իրեն յատուկ քաղաքացիներով:

Լիբանանի մէջ պատերազմի տարիներէն ետք աշխուժօրէն գործող եւ վերջին տասնամեակին աներեւակայ յիշուող բազմաթիւ գիշերային զբօսավայրերը այսօր կը հանդիսանան երիտասարդութեան համարման գլխաւոր կեդրոններէն մէկը:

Հոն կը հաւաքուին ամէն տեսակի, մակարդակի, կրօնի եւ դասակարգի մարդիկ: Զբօսավայրը չի ճանչնար աղքատն ու հարուստը, այս կամ այն կրօնին կամ կուսակցութեան պատկանողը, այլ անհրաժեշտ գոմար ունեցողը կը քաշէ ներս, իր բազուկներուն մէջ...

Լիբանանի եւ մասնաւորաբար Պէյրութի եւ շրջակայքին մէջ հաստատուած գիշերային զբօսավայրերը գաղար կ'առնեն միայն Երկուշաբթի օրերը, իսկ անոնց ծառայութիւններուն մատուցումը գազաթնակէտին կը հասնի Շաբաթ եւ Կիրակի օրերը, երբ գրեթէ բոլորը լեցուն կ'ըլլան երիտասարդ երիտասարդուհիներով, որոնցմէ իւրաքանչիւրը ոչ շատ տարբեր նպատակի համար կ'ուղղուի այդ վայրերը՝ «առօրեայէն գուրս գալու եւ գլուխը հանգչեցնելու համար»:


Իւրաքանչիւր զբօսավայր ունի իր գործելիքներն ու քաղաքակրթութիւնը, որոնք ի յայտ կու գան մուտքէն իսկ: Անոնք, որոնք Պէյրութի գիշերային կեդրոններու մեծամասնութիւնը կը կազմեն, կը փորձեն պահել որոշ մակարդակ եւ հաւասարակշռութիւն. անոնք ընդհանրապէս հաստատուած կ'ըլլան մայր պողոտաներու կամ դիւրին հասանելի շրջաններու մէջ: Այս զբօսավայրերը յաճախելու համար անհրաժեշտ է, որ եկողները գոյգեր ըլլան եւ պատշաճ կազմածք ունենան: Աստուղ ունին դրան մուտքին հանգանակ են ներքը հսկող պահակներ, որոնք որեւէ կռիւի կամ ծայրայեղ շարժումներու եւ կեցուածքներու առաջը կ'առնեն: Միւս զբօսավայրերը, որ թմրեցուցիչն ու հրապարակային սիրաբանութիւնը տիրակալներու շրջաններն են, ընդհանրապէս հաստատուած կ'ըլլան քաղաքին ծայրամասերը կամ քանի մը յարկ գետնին տակ: Աստուղ յատուկ ծանուցումներ չեն ընդ կէտէն ըլլար բոլորին, այլ կ'ուրեւնեն որոշ շրջանակ, որ հոն կը յաճախէ եւ գոհացում կու տայ իր մուտքի մտերմութիւնը: Այս վայրերը այցելողները կրնան ըլլալ խուճուկ տղաք կամ աղջիկներ, նոյնիսկ՝ կիսամթալ վիճակի մէջ: Սակայն երկու պարագաներուն ալ կան երեւոյթներ, որոնք անխուսափելիօրէն կը տիրեն գիշերային զբօսավայրերուն մէջ:

Դրան մուտքէն արդէն մուտք եւ «խորհրդաւոր» մթնոլորտ ունեցող գիշերային զբօսավայրերը ներս կը հրաւիրեն անոր առջեւէն անցնողները՝ իրենց լոյսերով եւ դրան մուտքին հասնող «երաժշտութեամբ»: Խուճուկ երիտասարդները գրեթէ ամէն շաբաթ տեղ մը կ'ընտրեն՝ հոն իրենց ուրախութիւնը պարելու եւ իրենց կիրքերը գոհացնելու:

Բարձր երաժշտութիւն, ծխախոտի ծուխով «ամպած» մթնոլորտ, տեսաւար եւ անհկարգութիւն բաղադրութեամբ եւ գոյներով խմիչքներ, այլազան ձեւի մարմիններու շարժումներ եւ խանդավառութիւն, երբեմն մեղմ եւ երբեմն զօրացող գունաւոր լոյսեր եւ գիշերուան պզտիկ ժամերէն ետք թմրեցուցիչ ու գանազան աստիճանի սիրաբանութիւններ կը կազմեն երեկոյին եւ զբօսավայրին անխուսափելի բաղադրիչները:

Ներքը կարելի չէ գանազան մարդիկը. գրեթէ բոլորը կը նմանին իրար՝ նորոյթի համաձայն հագածով եւ մագերու յարդարանքով, օղերով ու արտաքին տարօրինակ զարդարանքով: Վայրը լեցուն կ'ըլլայ հարիւրաւոր մարդոցմով, եւ հոն գոյութիւն չ'ունենար խորականութիւն: Բոլորը կ'ապրին նոյն միջավայրին մէջ՝ միջին դասակարգին պատկանողն ու հարուստը, պարզ ընտանիքի գաւազն ու քաղաքակրթ մեծ անձնաւորութեան աղջիկը, կարծես այդ վայրին մէջ բոլորը կը միանան եւ կը նոյնանան: Իւրաքանչիւրը կը պարէ իրեն յատուկ ձեւով եւ պարեկներով մէջն քայլի ոչ մէկ ձեւով կապ կ'ունենայ իր շուրջիններուն հետ: Հակառակ պարագային, խուճուկութիւններու կամ կռիւներու ժամանակ կը յայտնուին զբօսավայրին պահպանները՝ սեւ շապիկ եւ կաշի սեւ բաճկոն հագած հուճկու երիտասարդներ, որոնք իսկույն կը հանդարտեցնեն կռիւը եւ անհրաժեշտութեան պարագային դուրս կը դնեն խուճուկարները: Անէն մէջ կը կազմած է իրեն յատուկ աշխարհը եւ անոր մէջ կը փորձէ հասնել ծայրայեղ ուրախութեան, անհոգութեան եւ խանդավառութեան: Լիբանանի մէջ գիշերային զբօսավայրը թերեւս միակ վայրն է, ուր բոլոր ծանրերը կը լռեն, չի լուրի պողոտայի կամ ողբ, դանդաւ կամ շողջորթութիւն, որովհետեւ բարձր երաժշտութիւնը, որ կը հասնի մինչեւ մարմնի իւրաքանչիւր մասնիկը, կը տիրապետէ եւ իր մէջ կը խեղդէ բոլոր աղմուկները:

Ուրախութեան եւ խանդավառութեան չափանիշները սովորականէն բոլորովին տարբեր են այստեղ: Իւրաքանչիւրը գայն կ'ըմբռնէ իր հասկացողութեամբ եւ համոզումներով: Շատեր քանի մը պար պարելով արդէն հասած կ'ըլլան գերագոյն երջանկութեան, ուրիշներ կը նախընտրեն խմել գանազան տեսակի խմիչքներ՝ «իրենց ցաւերէն դուրս գալու եւ եր-



